# ՎՐԱՍՏԱՆ

«ვრასტანი» (საქართველო) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 67 - 68 (16870) ՇԱԲԱԹ 22 ՕԳՈՍՏՈՍԻ 2020 Թ. ԳԻՆԸ՝ 40 ԹԵՏՐԻ


ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

## ԱՆԿԱԽ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՆՑԿԱՑՎԵՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

### ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐՆ ԸՆԴԼԱՅՆՎՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ Է

*Օգոստոսի 20-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիայի նախագահությամբ անցկացվեց երկրի կառավարության հերթական նիստը: Նիստում վարչապետի առաջարկությամբ, քննարկվեցին համավարակի պայմաններում երկրում ստեղծված սոցիալական ու տնտեսական ճգնաժամի կարգավորման, հոկտեմբերին խորհրդարանական ընտրությունների բարձր մակարդակով անցկացմանն առնչվող հարցեր:*



Խոսելով համավարակով պայմանավորված սոցիալական եւ տնտեսական ճգնաժամի վերաբերյալ՝ Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան նշեց, որ չնայած դրան, ընտրությունները պետք է անցկացվեն բարձր մակարդակով: Միաժամանակ, վարչապետի հավաստմամբ, ստեղծված

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

## ԹԵԱ ԱԽՎԼԵԴԻԱՆԻ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏԱՐԱՆՋԱՏՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԹԵԹԵՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ»

*Օգոստոսի 15-ին Թբիլիսիի Սուրբ Երրորդության Մայր տաճարում անցկացվեց Աբխազիայում ռազմական դիմակայության ժամանակ զոհված 13 անձանց քաղաքացիական հոգեհանգստի արարողությունը:*



Միջոցառմանը ներկա էին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, Թբիլիսիի քաղաքապետ Կախա Կալաձեն, արդարադատության նախարար Թեա Ծուլուկիանին, պաշտպանության նախարար Իրակլի Ղարիբաշվիլին եւ հաշտեցման ու քաղաքացիական իրավահավասարության հարցերով պետնախարար Թեա Ախվլեդիանին: Նրանք հարգանքի տուրք մատուցեցին զոհերի հիշատակին եւ ցավակցեցին նրանց ընտանիքներին:

Գիորգի Գախարիայի խոսքով, նրանցից յուրա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ՝ 41

## «ՀԱՄՈԶՎԱԾ ԵՆՔ, ՈՐ ԳՈԳԻ ՄԵՇՎԵԼԻԱՆԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԲՈԼՆԻՍԻԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԱՐԺԱՆԻ ԿԵՐՊՈՎ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՆԱԵՎ ԾԱԼԿԱՆ, ԹԵԹՐԻԾՂԱՐՈՆ»

Օգոստոսի 18-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան, «Վրացական երազանք - Ժողովրդավարական Վաստան» կառավարող կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն, խորհրդարանի նախագահ Աչիլ Թալակվաձեն, նախ՝ Ծալկայում, ապա՝ Բոլնիսիում եւ Թեթրիծղարոյում, ներկայացրին հոկտեմբերի 31-ին անցկացվելիք խորհրդարանական ընտրություններում «Վրացական երազանքի» Բոլնիսիի, Դմանիսիի, Թեթրիծղարոյի եւ Ծալկայի մեծամասնական պատգամավորի թեկնածու Գոգի Մեշվելիանուն:



Պատգամավորի ներկայացման իր խոսքում վարչապետ Գիորգի Գախարիան մանրամասն խոսեց կորոնավիրուսի համավարակով պայմանավորված սոցիալական եւ տնտեսական ճգնաժամի հաղթահարման ուղղությամբ կառավարության ձեռնարկած միջոցառումները, բնակչությանը ցուցաբերվող սոցիալական օգնությունը:

Խոսելով թեկնածու մասին՝ վարչապետը հիշեցրեց Գոգի Մեշվելիանու գործունեության փաստերը Բոլնիսիի մունիցիպալիտետի վարչության նախագահի, ապա այդ մունիցիպալիտետից խորհրդարանի մեծամասնական պատգամավորի կարգավիճակում, եւ համոզմունք հայտնեց, որ Գոգի

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

## ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է «ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՈ ԳՈՐԾԸՆԿԵՐ» ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

*Օգոստոսի 20-ին Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան հայտարարեց «Պետությունը՝ քո գործընկեր» կառավարական նոր ծրագրի մեկնարկի մասին:*

Հանդես գալով նոր ծրագրի շնորհանդեսին՝ վարչապետը հայտարարեց, որ այն ուղղված է երկրում մասնավոր ձեռներեցության խրախուսմանը: Նրա խոսքով, բոլոր նրանք, ովքեր ցանկանում են սկսել գործարարություն, գյուղական տնտեսությունը վերածել ֆերմերականի կամ ներգրավվել զբոսաշրջության բիզնեսում, վերոնշյալ նախագիծը հնարավորություն է ընձեռում հետայսու «Մեկ տարածք, մեկ պատուհան» սկզբունքով ստանալ գործարարության մեկնարկի համար անհրաժեշտ խորհրդատվությունները ու միջոցները, մանրամասն տեղեկացվել պետական ծրագրի վերաբերյալ:

Ինչպես նշեց վարչապետը, այսօրվա դրությամբ, ողջ Վրաստանում ավելի քան 100 բնակավայրերում գործում են 814 հասարակական կենտրոններ եւ իրաիրավաբանական 24 տներ,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

## ՆՈՐ ԲԱՂԱԴՐԻՉ «ՆԵՐԴՐԻՐ ԱՊԱԳԱՆ» ԾՐԱԳՐՈՒՄ

*Վրաստանի կառավարության որոշմամբ, տարերային աղետից տուժած ֆերմերների աջակցության նպատակով, «Ներդրիր ապագան» պետական ծրագրում ավելացվել է նոր բաղադրիչ:*

Այն նախատեսում է բազմամյա մշակաբույսերի այգիներում կարկուտից, փոթորկից եւ ջրհեղեղներից վնասված տնկիների փոխարինում: Ֆինանսներ կհատկացվի այգիների աճեցման բաղադրիչով սահմանված ցանկացած բազմամյա մշակաբույսի, այդ թվում՝ խաղողի (բացառությամբ՝ ռքածիթելա տեսակի) տնկիների ձեռքբերումը, նաեւ վնասված ռքածիթելայի տնկիների փոխարինումը ցանկացած այլ մշակաբույսի տնկիներով:

Կֆինանսավորվի ընթացիկ տարվա հուլիսի 15-ից տարերային աղետից վնասված տնկիների փոխարինումը, որոնք զբաղեցնում են նվազագույնը 50 հա տարածք:

Համաֆինանսավորումը տարածվում է երկրի բոլոր մունիցիպալիտետներում, ապա՝ ինքնակառավարման Թբիլիսի, Ռուսթավի, Քութայիսի, Բաթումի եւ Փոթի քաղաքներում:

Համաֆինանսավորումը ստանալու համար տարերային աղետի հետեւանքով բազմամյա մշակաբույսերի այգիների վնասվելու օրվանից առնվազն 60 օրացուցային օրվա ընթացքում տուժվածները պետք է դիմեն գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման գործակալությանը՝ ծրագրում ներգրավվելու համար համապատասխան փաստաթղթերի ներկայացմամբ:

ԿՐՈՆԱԿԱՆ

## ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ՆՇՎԵՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ

*2020 թվականի օգոստոսի 16-ին Հայ Առաքելական Սուրբ եկեղեցին նշեց Սուրբ Աստվածամոր Վերափոխման տոնը, որը հինգ տաղավար տոներից չորրորդն է: Աստվածամոր տոնը Վիրահայոց թեմի բոլոր եկեղեցիներում նշվեց Սուրբ պատարագներով եւ խաղողօրհնության կարգով:*

Վաղ առավոտից թեմի եկեղեցիների խորանները զարդարվել էին օրվա խորհրդանիշ խաղողի տեսակներով ու մրգով: Ու չէր դադարում մարդկանց հոսքը դեպի եկեղեցի. գալիս էին գեղեցիկ զարդարված զամբյուղներով, սկուտեղներով՝ տարվա բերք ու բարիքի օրհնությունը եւ Բարձրյալի բարեխոսությունը ստանալու ակնկալիքով:



Առավոտյան ժամերգությունից հետո, եկեղեցիներում կատարվեց Անդաստանի կարգ: Օրհնվեցին աշխարհի չորս ծագերը եւ ժողովուրդները: Այնուհետեւ, ամենուրեք մատուցվեց Սուրբ Պատարագ:

Թբիլիսիի Հավլաբարի Սուրբ

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱՐԱՐՈՒԹՅԱՆԸ

# ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է «ՊԵՏՈՒԹՅՈՒՆԸ՝ ՔՈ ԳՈՐԾԸՆԿԵՐ» ԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

որոնք քաղաքացիներին հնարավորություն են ընձեռում ներգրավվել պետական այս կամ այն ծրագրում, որոնք իրականացվում են «Արտադրի'ր Վրաստանում» գործակալության, զբոսաշրջության ազգային վարչակազմի եւ գյուղի ու գյուղատնտեսության զարգացման գործակալության կողմից: Վարչապետի խոսքով, «Պետությունը՝ քո գործընկեր» ծրագրի շրջանակներում գործում է միացյալ էլեկտրոնային https://programs.gov.ge/ հարթակը:

«Պետությունը՝ քո գործընկեր» կառավարական ծրագրի շնորհանդեսին ելույթ ունեցան նաեւ Վրաստանի արդարադա-




տության նախարար Թեա Ծուլուկիանին, էկոնոմիկայի եւ կայուն զարգացման նախարար Նաթիա Թուրնավան, գյուղատնտեսության նախարար Լեւան Դավիթաշվիլին:

ՀԱՐԳԱՆՔԻ ՏՈՒՐՔ

# ԹԵԱ ԱԽՎԼԵԴԻԱՆԻ. «ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ ԱՄԵՆ ԻՆՉ ԱՆՈՒՄ Է ՊԱՏԵՐԱԶՄԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՏԱՐԱՆՋԱՏՎԱԾ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ԹԵԹԵՎԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ»

(Սկիզբը՝ 1-ին էջում)

քանչյուրը ցույց է տվել անձնուրացության մեծ օրինակ, նրանք հերոսներ են, եւ կարեւոր է, որ տարիների ընթացքում նրանց գերեզմանների մասին տեղեկության բացակայությունից հետո, այսօր հնարավոր է դարձել նրանց պատվով հուղարկավորել:

Իր հերթին, հաշտեցման եւ քաղաքացիական իրավահավասարության պետնախարար Թեա Ախվլեդիանին նշեց, որ հուղարկավորության արարողությունը կանցկացվի տարբեր վայրերում, ըստ զոհվածների ընտանիքների ցանկության:

- Հաշվի առնելով Աբխազիայի պատերազմում զոհվածների ընտանիքների ցանկությունը՝ հուղարկավորությունը կանցկացվի տարբեր վայրերում, այդ թվում՝ եւ ընտանեկան գերեզմանոցներում: Այսօր հենց այդ սկզբունքով էլ զինվորական պատվով Դիղոմիի եղբայրական գերեզմանատանը կանցկացնենք երկու հուղարկավորություն,- հայտարարեց Թեա Ախվլեդիանին:

Նշենք, որ բռնազավթված Աբխազիայի տարածքից տեղափոխվել են ռազմական հակամարտության ժամանակ զոհված անհայտ կորած 13 զինծառայողների նույնականացված աճյունները:

ԻՐԱՎԱԿԱՆ

# «ՎՐԱՍՏԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՊԱՏԳԱՄԱՎՈՐ ՀԵՆՁԵԼ ՄԿՈՅԱՆԻՆ ՍՊԱՌՆՈՒՄ ԵՆ ՀԵՌԱԽՈՍՈՎ ...»

***«Վրացական երազանք» կուսակցությունից Վրաստանի խորհրդարանի Ախալքալաքիի եւ Նինոծմինդայի մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանը դարձել է սպառնալիքի եւ շորթման օբյեկտ:***

Ինչպես հայտարարեց պատգամավորի փաստաբան Տարիել Մուրմանիշվիլին, Մկոյանին հեռախոսազանգով սպառնացել են եւ նրանից 5 մլն դոլար շորթելու փորձ արել: Փաստաբանի խոսքով, Մկոյանը զայրացած ու մտահոգված է, նա դիմել է Վրաստանի Գլխավոր դատախազությանը եւ երկրում հավատարմագրված դիվանագիտական կորպուսին:

Փաստաբանի խոսքով, առաջին հեռախոսազանգը տեղի է ունեցել ընթացիկ տարվա հուլիսի 20-ին, երբ նրան զանգել են ռուսաստանյան հեռախոսահամարից եւ կովկասյան առոգանությամբ ռուսերենով պահանջել՝ հեռանալ քաղաքականությունից, հանգիստ մնալ, ոչ մեկի հետ կապ չունենալ, այլապես նրանից կխլեն ամենաթանկ մարդուն: Ըստ Մկոյանի փաստաբանի, մի քանի օր անց, կայացել է երկրորդ հեռախոսազանգը, եւ Մկոյանին ասել են՝ բիզնեսով ես զբաղված, ինչո՞ւ փող չես վճարում, մեզ 5 մլն պետք է տաս:

Նշենք, որ օգոստոսի 19-ին ոստիկանության Սամցխե-Ջավախեթիի բաժնում սպառնալիքի եւ շորթման դեպքի առիթով հարցաքննել են Հենզել Մկոյանին:

Հավելենք, որ Հենզել Մկոյանը Վրաստանի խորհրդարանի պատգամավոր է 1999 թվանակից մինչ օրս:

## ՍՊԱՌՆԱԼԻՔԸ Ի ԿԱՏԱՐ ԱԾՎԵ՞Ց...

Հուլիսի վերջերի սպառնալի հեռախոսազանգերից գրեթե մեկ ամիս անց, երեկ՝ օգոստոսի 21-ին, Խոսպիոյից Ախալքալաքի տանող ճանապարհին փորձել են պայթեցնել Վրաստանի խորհրդարանի «Վրացական երազանքի» մեծամասնական պատգամավոր Հենզել Մկոյանի եղբոր՝ Մարտուն Մկոյանի «Mersedes» մակնիշի ավտոմեքենան: Պայթյունից վնասվել են Մարտուն Մկոյանի լսողական ընկալիչները: Հենզել Մկոյանը եղբոր մեքենայի պայթյունի փորձը կապում է իր հետ եւ վստահ է, որ թիրախը ինքն է եղել, ոչ թե եղբայրը:

Ինչպես ասաց Հենզել Մկոյանը, ճամփեզրին, մեքենայի մոտ, պայթյունից փոս էր առաջացել, ծառի ճյուղերը կոտրվել էին, բացվել էին մեքենայի անվտանգության բոլոր չորս բարձիկները:



ԱԴՐԲԵՋԱՆ

## ՆՈՐ ԴԵՍՊԱՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը Ֆայիգ Գուլիեւին նշանակել է Վրաստանում Ադրբեջանի արտակարգ եւ լիազոր դեսպան: Նշենք, որ Ֆայիգ Գուլիեւը մինչ այդ զբաղեցնում էր Ադրբեջանի Սփյուռքի հարցերով պետկոմիտեի փոխնախագահի պաշտոնը:*

*Մեկ այլ հրամանագրով, Ալիեւը Դուրսուն Հասանովին ազատել է Վրաստանում Ադրբեջանի դեսպանի պաշտոնից:*

ԼԻԲԱՆԱՆ

## ԲԵՅՐՈՒԹՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿԱՐԱՁԳՎԵԼ Է

*Լիբանանի իշխանությունները Բեյրութում տեղի ունեցած պայթյունի պատճառով հայտարարված արտակարգ դրությունը մեկ ամսով երկարաձգելու որոշում են կայացրել: Արտակարգ դրությունը երկարաձգվել է մեկ ամսով՝ սեպտեմբերի 18-ը ներառյալ:*

*Հիշեցնենք, որ օգոստոսի 4-ին հզոր պայթյուն է որոտացել Լիբանանի մայրաքաղաք Բեյրութում: Զոհերի թիվը գերազանցել է 220-ը, վիրավորվել է ավելի քան 5 հազար մարդ: Պայթյունի հետեւանքով զոհվել է 13, վիրավորվել՝ 300 հայ:*

ԲԵԼԱՌՈՒՍ

## ՀԱԿԱԿԱՌԱՎԱՐԱԿԱՆ ՑՈՒՅՑԵՐԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ ԵՆ

*Մինսկում եւ Բելառուսի մյուս քաղաքներում շարունակվում են նախագահական ընտությունների արդյունքների չեղարկման պահանջով հակակառավարական ցույցերը:*

*Նշենք, որ Եվրոպայի հանրությունը, Միացյալ Նահանգները, միջազգային կազմակերպությունները չեն ընդունում օգոստոսի 9-ին Բելառուսում անցկացված նախագահական ընտրությունների արդյունքները, ըստ որի երկրի գործող նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն ստացել էր ընտրողների ձայների 79,7 տոկոսը:*

*Իսկ այդ ընթացքում Բելառուսի նախագահ Ալեքսանդր Լուկաշենկոն վարչապետի պաշտոնում կրկին նշանակել է Ռոման Գոլովչենկոյին:*

ԿՐՈՆԱԿԱՆ

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄՈՒՄ ՆՇՎԵՑ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱՄՈՐ ՎԵՐԱՓՈԽՄԱՆ ՏՈՆԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

էջմիածին եկեղեցում Սուրբ պատարագ մատուցեց Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանը:

Հընթացս Սուրբ պատարագի, Տեր Կիրակոս վարդապետը հավուր պատշաճի քարոզ խոսեց օրվա խորհրդի՝ Տիրամոր մեծ Առաքելության, նրա Ննջման եւ Հարության, Վերափոխման մասին, կարեւորեց Հայ եկեղեցու տածած սերը Սուրբ Մարիամ Աստվածածնի հանդեպ, անդրադարձ կատարեց մայր եւ որդի հարաբերություններին, հորդորեց Աստվածամոր եւ որդու օրինակով շարունակել ապրել վերափոխման լույսով եւ Սուրբ Հարության հավատով: Հայր Սուրբը խաղաղություն եւ առաջընթաց մաղթեց Հայաստան եւ Վրաստան երկրներին ու ժողովուրդներին եւ շնորհավորեց ներկաներին, հատկապես մայրերին ու Մարիամներին տոնի առիթով:

Տոնական Սուրբ պատարագին ներկա էին Վրաստանում Հայաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Ռուբեն Սադոյանը, Վրաստանի խորհրդարանի պատգամավոր Ռուսլան Պողոսյանը, Վրաստանի վարչապետի խորհրդականներ Կախա Կախիշվիլին, Սոզար Սուբարին, Թբիլիսիի Իսանիի շրջանի վարչության նախագահ Կախա Լաբուցիձեն, Վրաստանի կառավարության խորհրդարանի հետ կապի ծառայության աշխատակից Կարեն Եղիազարյանը, «Վրաստան» թերթի խմբագիր Վան Բայբուրթյանը, Պետրոս Ադամյանի անվան թատրոնի գեղարվեստական ղեկավար Արմեն Բայանդուրյանը, «Բազմազգ Վրաստան» շարժման նախագահ Առնոլդ Ստեփանյանը, թբիլիսահայ հասարակայնության ներկայացուցիչներ, մտավորականներ, հավատացյալներ:

Սուրբ պատարագներ մատուցվեցին եւ խաղողօրհնեքի կարգ կատարվեց նաեւ Ախալցիխեի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, Ախալքալաքիի Սուրբ Խաչ, Նինոծմինդայի Սուրբ Սարգիս, Գանձայի Սուրբ Կարապետ, Բաթումիի Սուրբ Փրկիչ, Քվեմո Քարթլիի Շահումյանի Սուրբ Աստվածածին, Ռուսթավիի Սուրբ Գրիգոր Նարեկացի հոգեւոր կենտրոնում եւ մյուս հայաբնակ վայրերի եկեղեցիներում ու մատուռներում: Իսկ Նինոծմինդայի շրջանի Փոքր Խանչալիի Սուրբ Հակոբ եկեղեցում այս տոնով ազդարարվեց Աստծու տան վերաբացումը:

# ՎԻՐԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՄԱԿ-Ի ՄԱՆԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԻ ՀԵՏ

***2020 թվականի օգոստոսի 17-ին, Թբիլիսիի Սուրբ Գեւորգ առաջնորդանիստ եկեղեցում Վիրահայոց թեմի առաջնորդ Տեր Կիրակոս վարդապետ Դավթյանն ընդունեց Վրաստանում ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի ներկայացուցիչ Հասան Խալիլին: Զրույցն անցավ ջերմ մթնոլորտում:***



Հանդիպման ընթացքում Մանկական հիմնադրամի ներկայացուցիչը ներկայացրեց Երեխաների պաշտպանության ուղղությամբ Վրաստանում ծավալած աշխատանքների եւ նախանշած ծրագրերի մասին, ուր ընդգրկված են նաեւ երկրի կրոնական եւ ազգային փոքրամասնության կառույցները: Հյուրը անդրադարձ կատարեց եւ անթաքույց գոհունակությամբ պատմեց հուլիս ամսվա սկզբներին Ջավախեթի կատարած իր այցի եւ այնուհետեւ այնտեղ կազմակերպած սեմինարի մասին:

Հոգեշնորհ Տեր Կիրակոս վարդապետը Հասան Խալիլին իրազեկեց երեխաների պաշտպանության ուղղությամբ Թեմում իրականացվող տարբեր դաստիարակչական եւ կրթամշակութային աշխատանքների, գործող նախակրթարանի եւ խմբակների մասին:

Հասան Խալիլի կողմից առաջարկություն արվեց նոյեմբեր ամսին թեմում, ի մասնավորի՝ «Հայարտուն» կենտրոնում, կազմակերպել ՄԱԿ-ի Մանկական հիմնադրամի սեմինար հանդիպումը, ինչը առաջնորդի կողմից արժանացավ հավանության:

# Շաբաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԲԱՆԱԿ

## ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ՄԵԿՆԱՐԿՈՒՄ Է ՊԱՀԵՍՏԱՅԻՆ ԶԻՆԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՎԱՔԱԳՐՈՒՄԸ



*Վրաստանի ազգային գվարդիայի հրամանատար, գնդապետ Ռոման Ջոխաձեն հասարակությանը ներկայացրել է տարածաշրջանային պահեստի ընդունման եւ պահեստային զինծառայության անցկացման պայմանները: Ռոման Ջոխաձեի տեղեկատվությամբ, ակտիվ պահեստում գրանցումը կամավոր է ու վարձատրվող: Բացի այդ, գնդապետի տեղեկատվությամբ, 18-22 տարեկան ուսանողները՝ ներառյալ մեկ պայմանագրային պահեստային ծառայությունը, կհամարվի պարտադիր զինծառայություն:*

- Ներկա փուլում ակտիվ ռեզերվ կընդունվեն 18-50 տարեկան քաղաքացիները, ինչպես կանայք, այնպես էլ՝ տղամարդիկ, ովքեր բնակվում են Թբիլիսիում, Մցխեթայի, Աջարիայի, Գուրիայի, Սամեգրելոյի, Զեմո Սվանեթիի եւ Կախեթիի տարածաշրջաններում: Ակտիվ ռեզերվի գրանցումը կամավոր է եւ վարձատրվող: Պահեստայինի հետ ձեւակերպվում է հնգամյա պայմանագիր, որից հետո նրա աշխատատեղը պահպանվում է:

Մեկ տարվա ընթացքում ռազմական պատրաստվածությունը չի գերազանցում 45 օրը, պահեստայինի նվազագույն տարեկան վարձատրությունը կազմում է 2700 լարի:

Կարեւոր է, որ 18-22 տարեկան ուսանողի կողմից մեկ պայմանագրային պահեստային ծառայության անցումը կհամարվի որպես պարտադիր զինծառայություն:

Պահեստային ծառայության ողջ ցիկլի անցումը նախատեսում է հետեւյալ փուլերը՝ պահեստայինների հավաքագրման փուլ, ընտրական փուլ, պահեստային ծառայության անցում եւ պայմանագրի երկարաձգում:

Ռազմական պահեստային ծառայություն ընդունված անձանց տրվում են հետեւյալ սոցիալական ապահովման երաշխիքները: Նախ՝ ինչպես ռազմական ծառայության անցման ժամանակ, պահեստայինը օգտվում է սոցիալական երաշխիքներից, որոնք սահմանված են Վրաստանի օրենսդրությամբ: Պայմանագրով սահմանված ժամանակահատվածը համարվում է աշխատանքային ստաժ:

Ռազմական պահեստային ծառայության զորակոչման ժամանակահատվածում պահպանվում են աշխատատեղն ու աշխատավարձը: Պահպանվում են նաեւ պետական փոխհատուցումը, պետական ակադեմիական կրթաթոշակը, ինչպես նաեւ օրենսդրությամբ սահմանված սոցիալական պաշտպանության մյուս երաշխիքները,- հայտարարել է գնդապետ Ռոման Ջոխաձեն:

ԷԿՈՆՈՄԻԿԱ

## 2019 ԹՎԱԿԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ ԱՃԵԼ ԵՆ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԾԱՎԱԼՆԵՐԸ

*Վրաստանի վիճակագրության ազգային ծառայության տեղեկատվությամբ, 2019 թվականին օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալը կազմել է 1 310,8 մլն ԱՄՆ դոլար, ինչը 2018 թվականի տվյալներից ավելի է 0,3 տոկոսով: 2018 թվականին Վրաստանում ուղիղ ներդրումների տեսքով եղել 1 306,3 մլն ԱՄՆ դոլար:*

2019 թվականին Վրաստանում ամենամեծ ուղղակի ներդրումը կատարել է Մեծ Բրիտանիան՝ 236,6 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը կազմում է Վրաստանում ուղղակի ներդրումների 18% -ը:

Դրան հաջորդում է Թուրքիան՝ 175,3 միլիոն դոլար ներդրումով, երրորդ տեղում Իռլանդիան է, որը կատարել է 133,2 միլիոն դոլարի ներդրում, չորրորդ տեղում է ԱՄՆ-ը՝ 111,5 միլիոն դոլար ուղղակի ներդրումով:

Ուղղակի օտարերկրյա ներդրումներ իրականացրել են նաեւ Նիդերլանդները, Պանաման, Լյուքսեմբուրգը, Ռուսաստանը, Չինաստանը, Ճապոնիան:

ՀԵՌՈՒՍՏԱԱԼԻՔ

## ՀՐԱԺԱՐԱԿԱՆ Է ՏՎԵԼ ՎՐԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԱԼԻՔԻ ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԸ

*Օգոստոսի 18-ին Վրաստանի Առաջին ալիքի գլխավոր տնօրեն Վասիլ Մաղլափերիձեն հրաժարական տվեց: Համապատասխան հայտարարությամբ նա դիմել է Վրաստանի Առաջին ալիքի հոգաբարձական խորհրդի անդամներին:*

Պաշտոնաթողության կապակցությամբ տարածած հայտարարության մեջ Վասիլ Մաղլափերիձեն նշում է, որ 2017 թվականից Վրաստանի Առաջին ալիքը բոլոր ուղղություններով գրանցեց կարեւոր առաջընթաց, որը պայմանավորված է իմ գործընկերների բարձր պրոֆեսիոնալիզմով եւ թիմային աշխատանքով:

Ներկա դրությամբ, Վրաստանի Առաջին ալիքի գլխավոր տնօրենի պարտականությունները կատարելու է գլխավոր տնօրենի առաջին տեղակալ Թինաթին Բերձենիշվիլին:

Բացի այդ, Վրաստանի Առաջին ալիքի գլխավոր տնօրենի պաշտոնի համար այսօրվանից հայտարարվել է մրցույթ:

ՍԱՀՄԱՆԱԿԵՏ

## «ԼԱՐՍԻ» ԱՆՑԱԿԵՏԸ ՆՈՐԻՑ ՓԱԿՎՈՒՄ Է ԵՐԿՈՒ ՏԱՐՈՎ...

*Վրաստան-Ռուսաստան սահմանային «Վերին Լարսի» անցակետը, Ռուսաստանի կողմից կրկին փակվում է:*

Այս անգամ, ինչպես հայտնել է ռուսական ՏԱՍՍ գործակալությունը, փակման պատճառը սահմանային անցակետում «Միջազգային կոոպերացիա եւ արտահանում» ազգային ծրագրի շրջանակներում իրականացվելիք վերանորոգման աշխատանքներն են: 2021 թվականին անցակետում իրականացվելիք աշխատանքների համար ռուսական կողմից հատկացվել է 2 միլիարդ ռուբլի եւ նախնական հաշվարկներով վերանորոգման աշխատանքները կավարտվեն 2023 թվականին:

Շինմոնտաժային աշխատանքները նախատեսվում է սկսել 2021 թվականին:

Նշենք, որ Ռուսաստանի եւ Վրաստանի սահմանի վրա գործող միակ «Վերին Լարսի» անցակետը մոտ 5 տարի առաջ նույնպես վերանորոգման պատրվակով չէր գործում շուրջ երեք տարի : Այս տարվա մարտի 16-ին այն հերթական անգամ փակվեց, այս անգամ կորոնավիրուսի համավարակով պայմանավորված: Համավարակի լարվածության թուլացումից հետո, անցակետը սկսեց մասնակիորեն գործել:

### ԼՈՒՐԵՐ ՋԱՎԱԽԵԹԻԻՑ

### ՆԻՆՈԾՄԻՆԴԱ-ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՃԱՆԱՊԱՐՀԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄԸ ԿԱՎԱՐՏՎԻ ՄԻՆՉԵՎ ԱՄՍՎԱ ՎԵՐՋ

*Արդեն երկու տարի է, ինչ աշխատանքներ են տարվում Ախալքալաքի-Նինոծմինդա ճանապարհի ասֆալտապատման ուղղությամբ: Ներկայումս ընթացքի մեջ են Ջիգրաշեն գյուղից Նինոծմինդա տանող ճանապարհի ասֆալտապատման աշխատանքները: Ասֆալտապատմանը զուգահեռ իրականացվում են նաեւ խճապատման եւ հարթեցման աշխատանքներ:*

*Ըստ «ՋավախԱվտոԳզա» ընկերության ներկայացուցչի, այս պահին 4-5 բրիգադ տարբեր աշխատանքներ է կատարում: Ախալքալաքի քաղաքից մինչեւ Ջիգրաշեն գյուղ տանող ճանապարհն արդեն ասֆալտապատված է:*

*Ընկերության ներկայացուցչի խոսքով, Ախալքալաքի քաղաքից ճանապարհի մոտ 14 կմ-ն արդեն ասֆալտապատված է, մնացել է մոտ 4-5 կմ: Աշխատանքները կավարտվեն այս ամսվա վերջին:*

*Հիշեցնենք, որ ընդհանուր առմամբ կվերականգնվի Ախալցիխե-Նինոծմինդա ավտոճանապարհի՝ 70-86 կմ-ի 16 կմ ճանապարհահատվածը, այսինքն՝ Ախալքալաքի քաղաքից մինչեւ Նինոծմինդա քաղաք ընկած հատվածը:*

*Վերականգնման պայմանագիրը ստորագրվել է 2019 թվականի հուլիսի 10-ին: Դեռեւս 2019 թվականի ապրիլին ճանապարհի շինարարության համար 19 038 910 լարի գումարով հայտարարված մրցույթում 14 749 992,62 լարիով հաղթել էր «ՋավախԱվտոԳզա» ընկերությունը: Ներկա դրությամբ, աշխատանքներն իրականացնում է այդ ընկերության «Ճանապարհաշինության N1 վարչությունը»:*

### 559 ԲՈՒՔ՝ ԱԽԱԼՔԱԼԱՔՑԻ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻՆ



*Ախալքալաքիի մունիցիպալիտետում գրանցված է 559 առաջին դասարանցի: Նոր ուսումնական տարվանից բոլոր առաջին դասարանցիները կստանան բուքեր, բայց այդ թիվը վերջնական չէ, քանի որ շարունակվում է գրանցման գործընթացը:*

*Ինչպես տեղեկացրել է Ախալքալաքիի կրթական ռեսուրս-կենտրոնը, մունիցիպալիտետում 2020-2021 ուստարվա համար գրանցված են 559 առաջին դասարանցիներ, եւ ուսումնական տարվա սկզբից յուրաքանչյուրը կստանա «ACER» ապրանքանիշի նոր բուքներ:*

*- Մինչ օրս գրանցվել է 559 առաջին դասարանցի, բայց այդ թիվը վերջնական չէ,- ասաց Ախալքալաքիի ռեսուրս-կենտրոնի տնօրեն Թերեզա Չիվչյանը:*

*Նախորդ տարիների համեմատ, այս տարի նույն փուլում գրանցվել են ավելի քիչ առաջին դասարանցիներ: Անցած տարի նրանց թիվը 604 էր, իսկ 2018-ին՝ 694:*

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

## ԱՆՑԱԿԵՏՈՒՄ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ Է ՉՀԱՅՏԱԳՐՎԱԾ ԱՊՐԱՆՔ

Օգոստոսի 17-ին, Կարմիր կամուրջ սահմանային անցակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, կասկածի հիման վրա, խուզարկել են Վրաստանի քաղաքացի Ս.Ի.-ին պատկանող ավտոմեքենան եւ ուղեբեռը: Խուզարկության արդյունքում, հայտնաբերել են չհայտագրված տարբեր տեսակի ապրանքներ, ընդհանուր առմամբ՝ 19 391,16 լարի արժողությամբ:

Գործի նյութերը հետաքննության համար փոխանցվել են ֆինանսների նախարարության հետաքննչական ծառայությանը:

Նույն անցակետում, Վրաստանի ֆինանսների նախարարության եկամուտների ծառայության մաքսային աշխատակիցները, իրականացնելով բեռնափոխադրումների խստացված վերահսկողություն, կասկածի հիման վրա խուզարկել են Վրաստանի քաղաքացի Ս.Ա.ի կառավարման տակ գտնվող բեռնատար ավտոմեքենան: Խուզարկության արդյունքում, հայտնաբերել են չհայտագրված ապրանք, այդ թվում՝ 33 տարբեր մակնիշի ու մոդելի բջջային հեռախոս: Չհայտագրված ընդհանուր ապրանքի արժեքը կազմում է 22 849,90 լարի:

Գործի նյութերը հետաքննության համար փոխանցվել են ֆինանսների նախարարության հետաքննչական ծառայությանը:




Հատկանշական է, որ վերջին երկու ամսվա տվյալներով, Կարմիր կամուրջ մաքսային անցակետով սահմանը հատել է շուրջ 21 հազար բեռնատար ավտոմեքենա, իսկ Վրաստանից դուրս եկած ավտոմեքենաների թիվը գերազանցել է 22 հազարը:

ՎՐԱՍՏԱՆԻ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

# ԱՆԿԱԽ ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՊԵՏՔ Է ԱՆՑԿԱՑՎԵՆ ԲԱՐՁՐ ՄԱԿԱՐԴԱԿՈՎ

(Սկիզբը` 1-ին էջում)

պայմաններում կառավարության գլխավոր հոգսը քաղաքացիների առողջությունն է, նրանց աշխատատեղերի պահպանումն ու սոցիալական օգնության ցուցաբերումը:

- Գլոբալ համավարակը, ինչպես նաեւ տնտեսական խոր ճգնաժամը շարունակվում է: Թեպետ պետք է հստակ գիտակցենք, որ զուգահեռ տարվում է նախընտրական քարոզարշավ, որը նույնպես պետք է բարձր մակարդակով անցկացվի: Չնայած դրան, մեզ համար առաջնահերթ է մեր քաղաքացիների առողջությունը, աշխատատեղերի պահպանումն ու, բնականաբար, սոցիալական օգնության ցուցաբերումը առանձնապես երեխաներին,- հայտարարեց Գիորգի Գախարիան:

## ՆՐԱՆՔ, ՈՎՔԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԴԻՄԱՑ ԳՈՒՄԱՐ ՊԱՀԱՆՋԵՆ, ԿՊԱՏԺՎԵՆ ՕՐԵՆՔԻ ԽՍՏՈՒԹՅԱՄԲ

Գիորգի Գախարիան, անդրադառնալով 17 տարեկանը ներառյալ երեխաներին 200-ական լարիով ֆինանսավորելու պետական ծրագրին, նշեց, որ եղել են դեպքեր, երբ երեխաների գրանցման համար պատասխանատու անձինք գումար են վերցրել: Նրա խոսքով, նման անձինք կպատժվեն օրենքի ողջ խստությամբ:

- Մեր կողմից գործարկված երեխաների սոցիալական օգնության ծրագիրն արդեն գործում է: Այսօրվա դրությամբ, գրանցվել է 600 868 երեխա, որոնք ներկայացնում են 366 000 ընտանիք: Ինչ խոսք, սրանք տպավորիչ թվեր են, իսկ ծրագիրը ամենաիրական սոցիալական ծրագրերից մեկն է, որը մենք իրականացրել ենք վերջին տարիների ընթացքում եւ, որի նպատակը երեխաներին աջակցելն է,- հայտարարեց կառավարության ղեկավարը եւ հավելեց.

- Ցավոք, երկրում հանդիպում են մարդիկ, ովքեր փորձում են ստանալ ֆինանսական եւ երբեմն էլ քաղաքական օգուտ երեխաներին եւ նրանց ծնողներին պետության կողմից սոցիալական օգնության ստացման գործում իբր օգնելու համար: Համոզված ենք, որ մեր քաղաքացիների հետ հարաբերություններում մենք միջնորդի կարիք չունենք: Մեր յուրաքանչյուր քաղաքացու, առանձնապես նրանց, ովքեր դեռեւս ունեն լեզվական արգելք, ցանկանում եմ ասել, որ ցանկացած պետական մարմին, սոցիալական գործակալություն, Լիբերթի բանկ եւ մունիցիպալային ցանկացած տեղական հաստատություն, պարտավոր է առանց որեւէ վճարման օգնել նման մարդկանց, հակառակ դեպքում, նմանները կպատժվեն օրենքի ողջ խստությամբ,- հայտարարեց վարչապետը:

## ՈՒՌՈՒՑՔԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՄԲ ՏԱՌԱՊՈՂ ՑԱՆԿԱՑԱԾ ՔԱՂԱՔԱՑՈՒ ԲՈՒԺՈՒՄԸ ԿԻՐԱԿԱՆԱՑՎԻ ԱՌԱՆՑ ԱՆՁՆԱԿԱՆ ՎՃԱՐՄԱՆ

Օգոստոսի 20-ի կառավարության նիստում անդրադառնալով քաղաքացիների առողջության թեմային` վարչապետը հանդես եկավ նոր նախաձեռնությամբ, ըստ որի, ուռուցքային հիվանդություններով տառապող քաղաքացիների բուժման ծրագրի ֆինանսավորումը կավելացվի 8 հազար լարիով, ինչը փաստորեն նրանց հնարավորություն կընձեռի առանց անձնական վճարումների անցնել բուժման լրիվ կուրսը: Վարչապետի խոսքով, այդ ծրագրից Վրաստանում կօգտվի 1974 քաղաքացի, եւ դա նրանց համար «բացառիկ նշանակալի աջակցություն կլինի»:

Շարունակելով թեման` վարչապետը նշեց, որ գործադիր իշխանության նախաձեռնությունը վերաբերում է նաեւ ուռուցքային հիվանդությունների թանկարժեք դեղորայքին: Ինչպես նշեց վարչապետը, ուռուցքային հիվանդությունների բուժման եզրափակիչ փուլում, նոր սերնդի դեղորայքի արժեքը կֆինանսավորվի պետության կողմից:

- Այսօրվա դրությամբ, Վրաստանում գրանցված է ուռուցքային հիվանդությամբ տառապող 38 հազար մարդ: Դեռեւս 2019 թվականի նոյեմբերին մենք կազմեցինք բավական ընդլայնված խումբ, որտեղ ներգրավեցինք ինչպես տեղական, այնպես էլ` միջազգային փորձագետների, որը եւ ձեւավորեց այն փոփոխությունները, որոնք այսօր ներկայացնում ենք հանրությանը,- հայտարարեց Գիորգի Գախարիան եւ հավելեց, որ այդ փուլում դեղորայքի ֆինանսավորումը նշանակալի աջակցություն կլինի ծանր հիվանդությամբ տառապող մարդկանց ու նրանց ընտանիքների համար:

*ՍԻՄՈՆ ԿԻԼԱՁԵ*

«ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԱԶԱՆՔ». ԸՆՏՐԱՀԱՄԱՐԸ` 41

# «ՀԱՄՈԶՎԱԾ ԵՆՔ, ՈՐ ԳՈԳԻ ՄԵՇՎԵԼԻԱՆԻՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆՈՒՄ ԲՈԼՆԻՍԻԻ ՀԵՏ ՄԻԱՍԻՆ ԱՐԺԱՆԻ ԿԵՐՊՈՎ ԿՆԵՐԿԱՅԱՑՆԻ ՆԱԵՎ ԾԱԼԿԱՆ, ԹԵԹՐԻԾՂԱՐՈՆ»

(Սկիզբը` 1-ին էջում)

Մեշվելիանին, ընտրատարածքների ընդլայնման պայմաններում եւս կկարողանա օրենսդիր մարմնում արժանիորեն ներկայացնել բոլնիսցիներին, դմանիսցիներին, թեթրիծղարոցիներին եւ ծալկացիներին:

Մեծամասնական թեկնածուի շնորհանդեսին ելույթ ունեցան նաեւ Կախա Կալաձեն ու Արչիլ Թալակվաձեն:

Պատգամավորության թեկնածուի ներկայացնելու պաշտոնական արարողությունից հետո, Գիորգի Գախարիան, Կախա Կալաձեն, Արչիլ Թալակվաձեն, Գոգի Մեշվելիանին, Ծալկայի քաղաքապետ Իլիա Սաբաձեի ուղեկցությամբ եղան Ծալկայի մունիցիպալիտետի Իմերա գյուղում, ծանոթացան 2019 թվականին սկսված եւ ընթացիկ տարվա սեպտեմբերին շահագործման հանձնվող նորակառույց դպրոցի, տեղական բյուջեից գրեթե 2 միլիոն լարիով ֆինանսավորված Բեշթաշենի նորակառույց ճանապարհի աշխատանքներին, ինչպես նաեւ մունիցիպալիտետում իրականացվող եւ իրականացվելիք ենթակառույցային մյուս նախագծերին:

### ԾԱԼԿԱ

Մեծամասնական թեկնածուի ներկայացման շնորհանդեսին ***Ծալկայի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր Ռազմիկ Հանեսյանը*** ասաց.

- Իհարկե լավ կլիներ, եթե թեկնածու առաջադրվեր մեր ծալկացիներից, թեպետ կարծում եմ, որ այս պարագայում էլ շրջանն արժանիորեն կներկայացվի խորհրդարանում: Բոլնիսցի իմ ծանոթները շատ դրական են բնութագրում Գոգի Մեշվելիանուն, նա թողնում է գործունյա, ազնիվ եւ համարձակ մարդու տպավորություն: Կարծում եմ` պատահական չէ, որ վարչապետ Գիորգի Գախարիան անձամբ երաշխավորում է նրան` որպես մեր մեծամասնական պատգամավոր: Գիորգի Գախարիայի երաշխավորությունը մեծ նշանակություն ունի մեզ համար, քանի որ տեսանք, թե ինչ վճռականությամբ, ես կասեի` նույնիսկ համարձակությամբ է գործում համատարած վարակի ժամանակահատվածում: Այդ գործունեության արդյունքն է, որ Վրաստանում, ի տարբերություն շատ ավելի զարգացած երկրների ու մեր անմիջական հարեւանների համավարակային իրավիճակը շատ ավելի բարվոք է: Իսկ ինչ վերաբերում է Գոգի Մեշվելիանու թեկնածությանը, ապա, կարծում եմ, որ ծալկացիները այն կպաշտպանեն, քանի որ նա էլ տեղում իրավիճակն ընկալում է տեղացիների նման: Օրինակ, խոստացավ հնարավորինս անել Այազմայում մեր մեծ հայրենակցի` գուսան Հավասու տուն-թանգարանի բացման գործում, աջակցել առանձին ենթակառույցային նախագծերի իրականացման համար ներդրողներ գտնելու հարցում: Բոլորս հոգնել ենք դատարկ խոստումներից, պետք են կոնկրետ գործեր, եւ կարծում եմ` Գոգի Մեշվելիանին հենց գործի մարդ է:



### ԲՈԼՆԻՍԻ

Գոգի Մեշվելիանու ներկայացման արարողությանը մեզ հետ զրույցում ***Բոլնիսիի մունիցիպալիտետի սակրեբուլոյի պատգամավոր, բոլնիսխաչենցի Լեւոն Մանուկյանը*** ասաց.

- Գոգի Մեշվելիանին խոսքի տեր մարդ է, եւ դա ապացուցեց, երբ բոլիսխաչենցիներին խոստացավ միջոցներ տրամադրել Ղազարոս Աղայանի տուն-թանգարանի վերանորոգման համար: Նրան բոլորս լավ գիտենք: Թե' որպես վարչության նախագահի եւ թե' որպես խորհրդարանի պատգամավոր` հաճախ էր լինում մեր գյուղում, հետաքրքրվում մարդկանց հուզող հարցերով: Հետաքրքրվում էր ոչ թե ուղղակի, այլ կոնկրետ օգնություն ցուցաբերելու համար: Բավական է նշել կորոնավիրուսով պայմանավորված սահմանափակումների ժամանակահատվածը: Գոգի Մեշվելիանին, բնականաբար, վարչապետի գլխավորած կառավարության հետ միասին, հնարավորինս արեց, որ տեղական ֆերմերները կարողանան աշխատել, կարողանան իրացնել իրենց արտադրանքը: Հավատացնում եմ, դա նշանակալի օգնություն էր, էլ չեմ խոսում կառավարության կողմից տրամադրվող սոցիալական օգնության մասին: Համոզված եմ, որ առաջիկա չորս տարիներին էլ Գոգի Մեշվելիանին խորհրդարանում կներկայացնի մեր շահերը,- ասաց Բոլնիսիի մունիցիպալիտետի սակեբուլոյի պատգամավորը:

### ԹԵԹՐԻԾՂԱՐՈ

***Թեթրիծղարոյի մունիցիպալիտետի Սամշվիլդե գյուղի հանրային դպրոցի տնօրեն Ալլա Շիրամյատովա-Քամալյանը*** մեզ հետ զրուցելիս ասաց, որ իրենք եւս մեծ հույսեր են կապում Գոգի Մեշվելիանու հետ:

- Բոլորի ներկայացմամբ, նա, իրոք, գործուն անձնավորություն է, եւ հուսով ենք, որ ընկալումով կմոտենա մեզ հուզող հարցերի կարգավորմանը: Կարեւոր է, որ նրա թիկունքում «Վրացական երազանքն» է եւ Վրաստանի կառավարությունը, վարչապետը: Միայն այն, թե Գիորգի Գախարիայի գլխավորած կառավարությունը ինչպես գործեց համավարակի պայմաններում, ինչ օգնություն ցուցաբերեց բնակչությանը, բավական է, որ մեր մարդիկ ընտրություններին աջակցեն եւ շրջագծեն 41 համարը,- ընդգծեց կրթօջախի տնօրեն Ալլա Շիրամյատովա-Քամալյանը:

*Պատրաստեց ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆԸ*

## ԿԱԽԱ ԿԱԽԻՇՎԻԼԻՆ` ԴԱՎԹՅԱՆՆԵՐԻ ՏԻԿՆԻԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆՈՒՄ



«Վրացական երազանք» կուսակցությունից Թբիլիսիի Իսանիի ընտրատարածքում առաջադրված խորհրդարանի մեծամասնական պատգամավորության թեկնածու, Վրաստանի վարչապետի խորհրդական, Վրաստանի քրեակատարողական համակարգի նախկին նախարար Կախա Կախիշվիլին Հավլաբարում այցելեց Գարրի Դավթյանի տիկնիկային թատրոն, զրուցեց թատրոնի ղեկավար տիկին Ժաննա Դավթյանի հետ, ծանոթացավ թատրոնի պատմությանը, դիտեց դրվագներ ձեռագործ տիկնիկներով տարբեր ներկայացումներից:

## ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱ. «ՊԵՏՔ Է ՀՈԳԱՆՔ, ՈՐ ԲՈԼՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԸ ԻՄԱՆԱՆ ՎՐԱՑԵՐԵՆ»

### ՆԵՐԿԱՅԱՑՎԵՑ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ԵՎ ԳԱՐԴԱԲԱՆԻԻ ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԻՑ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՄԵԾԱՄԱՍՆԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆ

*- Պետք է հոգանք կրթության բարեփոխման հարցով, որպեսզի բոլոր քաղաքացիները իմանան վրացերեն,- այս մասին օգոստոսի 21-ին Մառնեուլիում, «Վրացական երազանքի» Մառնեուլիի եւ Գարդաբանիի ընտրատարածքից մեծամասնական պատգամավորի թեկնածու Զաուր Դարգալին ներկայացման շնորհանդեսին հայտարարեց Վրաստանի վարչապետ Գիորգի Գախարիան:*

Իր խոսքում նշելով, որ ազգային բազմերանգությունը երկրի հարստությունն է, վարչապետը մանրամասն խոսեց Մառնեուլիում ենթակառույցային նախագծերի մասին, ընդգծեց ազգային փոքրամասնությունների կողմից պետական լեզվի իմացության մակարդակի բարձրացման անհրաժեշտությունը, ինչը նախատեսում է կրթական համակարգի բարեփոխում:

Ներկայացնելով թեկնածուին` Գիորգի Գախարիան նշեց, որ, մառնեուլցիները քաջածանոթ են Զաուր Դարգալիի գործունեությանը, քանի որ վերջինս երրորդ տարին է, ինչ գլխավորում է մունիցիպալիտետի քաղաքապետարանն ու ակտիվ գործունեություն ծավալել կորոնավիրուսի համավարակով պայմանավորված ծանր իրավիճակում:

Մեծամասնական պատգամավորության թեկնածուի ներկայացման շնորհանդեսին ելույթ ունեցան նաեւ «Վրացական երազանք» կուսակցության գլխավոր քարտուղար Կախա Կալաձեն, խորհրդարանի նախագահ Արչիլ Թալակվաձեն: